ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/58

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2906-2021 գրությամբ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/898-2021 գրության հիման վրա 01.03.2021թ. թիվ 26/26-1/2906-2020 գրությամբ նախաձեռնել է «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սոֆի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սոֆի գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/58 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/898-2021 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սոֆի գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակիցը 16.02.2021թ. ներկայացրել է դիմում, ըստ որի, հանդիսանալով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից, հրաժարվել է նույն չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի 17.02.2021թ., հիմք ընդունելով Մասնակցի կողմից 16.02.2021թ. ներկայացված դիմումը և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/58 ընթացակարգի շրջանակներում 05.03.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Սոֆի գրուպ» և «Դամբայ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.01.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, իսկ «Դամբայ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, ճանաչվել են հաղթող (ընտրված) մասնակիցներ, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջիններիս հետ կնքել պայմանագիր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2021թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Դամբայ» ՍՊԸ-ն 18.01.2021թ. ներկայացրել է դիմում, որով հրաժարվել է պայմանագիր կնքելուց, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակից ճանաչել «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ին՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն 16.02.2021թ. ներկայացրել է դիմում, որով հրաժարվել է նույն չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

5. «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն 16.02.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված դիմումով հայտնել է, որ հանդիսանալով «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգի երկրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ հրաժարվում է նույն չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2906-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.02.2021թ. թիվ ՊՆ/Պն/02/898-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Սոֆի գրուպ» և «Դամբայ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.01.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, իսկ «Դամբայ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, ճանաչվել են հաղթող (ընտրված) մասնակիցներ, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջիններիս հետ կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2021թ. նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «Դամբայ» ՍՊԸ-ն 18.01.2021թ. ներկայացրել է դիմում, որով հրաժարվել է պայմանագիր կնքելուց, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընտրված մասնակից ճանաչել «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ին՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2021թ. նիստի թիվ 8 արձանագրության համաձայն՝ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն 16.02.2021թ. ներկայացրել է դիմում, որով հրաժարվել է նույն չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

«Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն 16.02.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված դիմումով հայտնել է, որ հանդիսանալով «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-21-7/1» ծածկագրով ընթացակարգի երկրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ հրաժարվում է նույն չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 16.02.2021թ., Պատվիրատուին ուղղված դիմումով հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2021թ. թիվ 26/26-1/2906-2021 գրությամբ «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սոֆի գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**